ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2016 թվականի N 87-Ա

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՇՏԱԲԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N18-ԱԳ որոշմամբ հաստատված հավելվածի 32-րդ կետի պահանջները, **ո ր ո շ ու մ եմ,**

1. 2016 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ Սյունիքի մարզպետարանում կառավարման կետերի աշխատանքային խմբերի հետ անցկացնել <<Կառավարման պահեստային կետերի ստեղծման և դրանց նախապատրաստման կարգի դրույթները>> թեմայով առանձնացված շտաբային մարզումներ:

2. Առանձնացված շտաբային մարզումներին ընդգրկել՝

ՀՀ Սյունիքի մարզպետարանին, քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայություններին, կառավարման կետերի աշխատանքային խմբերին:

3. Հաստատել առանձնացված շտաբային մարզումների աշխատանքային խմբերի հերթափոխի գրաֆիկը՝ համաձայն N1 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ. հոկտեմբերի 5-ի
N -ԱԳ որոշման

ՑԱՆԿ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՈՒՄ ՆՇՎՈՂ ԿԵՏԵՐԻ

Մարզպետարանի օպերատիվ հաշվարկներում նշվում են՝

1. Մարզպետարանի գործունեության ապահովման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբերը, նրանց կազմը, խնդիրները ու ազդարարման, հավաքի կազմավորման, կառավարման կետեր դուրս բերելու ժամկետները

(օրինակ՝ կառավարման կետի գործունեության ապահովման նպատակով ստեղծվում են հետևյալ աշխատանքային խմբերը)

1. Տեղեկությունների հավաքման, վերլուծության և կառավարչական որոշումների կայացմանն ուղղված առաջարկությունների մշակման խումբ

Առաջին հերթափոխ՝

1.Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Գալյա Կարապետյան ժ. 9:00-12:00
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Սեյրան Ավետիսյան ժ. 9:00-12:00
3.Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Աիդա Համբարձումյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Գրիշա Խաչատրյան ժ. 12:00-15:00
2. Մարգարիտ Զախարյան ժ. 12:00-15:00
3. Դավթյան Գայանե ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Մուշեղ Կոստանդյան ժ. 15:00-18:00
2. Սառա Գրիգորյան ժ. 15:00-18:00
3. Մարատ Հարությունյան ժ. 15:00-18:00

2.Պետական կառավարման մարմինների հետ իրականացվող աշխատանքների համակարգման խումբ

Առաջին հերթափոխ՝

1.Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Մելանյա Հայրապետյան ժ. 9:00-12:00
2.Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Գրիգոր Թադևոսյան ժ. 9:00-12:00
3.Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Նարինե Գրիգորյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Աշոտ Ասրյան ժ. 12:00-15:00
2. Ռաֆիկ Ղազարյան ժ. 12:00-15:00
3. Վահրամ Արզումանյան ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Էդուարդ Միրզոյան ժ. 15:00-18:00
2. Սուրիկ Վեզիրյան ժ. 15:00-18:00
3. Արտյոմ Փիրյան ժ. 15:00-18:00

2□ **Կապի և ազդարարման ապահովման խումբ**

Առաջին հերթափոխ՝

1. Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Սարիկ Աղաբեկյան ժ. 9:00-12:00
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Ռազմիկ Ավետիսյան ժ. 9:00-12:00
3. Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Իվետա Հայրապետյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Արմինե Ծատրյան ժ. 12:00-15:00
2. Արփինե Հարությունյան ժ. 12:00-15:00
3. Իննա Բալայան ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Հայկ Հարությունյան ժ. 15:00-18:00
2. Երջանիկ Սարգսյան ժ. 15:00-18:00
3. Ժորա Բաբայան ժ. 15:00-18:00

2. **Նյութատեխնիկական ապահովման խումբ**

Առաջին հերթափոխ՝

1. Կառավարման մարմնի ստորաբաժանման պետի տեղակալ Արարատ Գրիգորյան ժ. 9:00-12:00
2. Կառավարման մարմնի ստորաբաժանման բաժնի պետ Աշոտ Խաչատրյան ժ. 9:00-12:00
3. Կառավարման մարմնի ստորաբաժանման աշխատակից Գայանե Սարգսյան ժ. 9:00-12:00

Երկրորդ հերթափոխ՝

1. Միհր Հայրյան ժ. 12:00-15:00
2. Տյոմա Սարգսյան ժ. 12:00-15:00
3. Անուշ Աբրահամյան ժ. 12:00-15:00

Երրորդ հերթափոխ

1. Վովա Այվազյան ժ. 15:00-18:00
2. Նելլի Կարապետյան ժ. 15:00-18:00
3. Համլետ Ավետիսյան ժ. 15:00-18:00

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կառավարման պահեստային կետերի ստեղծման և դրանց նախապատրաստման կարգը

Ընդհանուր դրույթներ

Սույն կարգով կարգավորվում են ռազմական դրության, զորահավաքի և արտակարգ իրավիճակների պայմաններում աշխատելու համար կառավարման պահեստային կետերի ստեղծման ու դրանց նախապատրաստման հետ կապված հարաբերությունները:

Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

ա/ կառավարման հիմնական կետ՝ համապատասխան ՔՊ ղեկավար կազմի տեղակայման վայրն է, որտեղից խաղաղ պայմաններում իրականացվում է ՔՊ ամենօրյա ղեկավարումը.

բ/ կառավարման պահեստային կետ՝ ժամանակակից խոցման միջոցներից և արտակարգ իրավիճակների հետևանքներից պաշտպանված, հատուկ կահավորված և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով հագեցված կառույց, որը նախատեսված է համապատասխան ղեկավար մարմնի տեղակայման և կայուն աշխատանքի ապահովման համար.

գ/ կառավարման քաղաքային պահեստային կետ՝ քաղաքի նախագծային կառուցապատման սահմաններում տեղակայված կառավարման պահեստային կետ.

դ/ կառավարման արտաքաղաքային պահեստային կետ՝ քաղաքի նախագծային կառուցապատման սահմաններից դուրս տեղակայված կառավարման պահեստային կետ.

ե/ կառավարման շարժական կետ՝ կառավարման պահեստային կետ, որը կապի և կառավարման միջոցներով հագեցված տրանսպորտային միջոց է՝ նախատեսված տեղանքում համապատասխան միջոցառումների անմիջապես կառավարման համար.

Կառավարման պահեստային կետերի ստեղծումը

Կառավարման պահեստային կետեր ստեղծվում են ՀՀ վարչապետի, ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ քաղաքային և սահմանամերձ 10կմ գոտու գյուղական համայնքների ու պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև ՔՊ տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների համար:

Կառավարման պահեստային կետեր ստեղծում են .

ա/ ՀՀ մարզպետարանները՝ մարզկենտրոնների նախագծային կառուցապատման սահմաններում, հիմնական տեղակայման տարածքից դուրս / հնարավորության դեպքում կառավարման արտաքաղաքային պահեստային կետ մարզի տարացքում/.

բ/ ՀՀ համապատասխան քաղաքապետարանները և սահմանամերձ գոտու գյուղապետարանները՝ համայնքների տարածքում, հիմնական տեղակայման տարածքից դուրս.

գ/ ՀՀ համապատասխան կազմակերպությունները՝ կազմակերպության տարածքում կամ տվյալ կազմակերպության ենթակայության տակ գտնվող այլ կազմակերպությունների տարածքներում:

Կառավարման պահեստային կետերն ստեղծվում և նախապատրաստվում են նախօրոք՝ խաղաղ ժամանակ և փորձարկվում են ՔՊ վարժանքների և ուսումնավարժությունների ժամանակ:

ՀՀ պետական կառավարման մարմինների և համապատասխան կազմակերպությունների կառավարման պահեստային կետերի ստեղծումը, նախապատրաստումն ու կահավորումը մոնիթորինգի, հետախուզության անցկացման և կապի սարքավորումներով՝ նախապես համաձայնեցվում է ՀՀ ԱԻՆ հետ, իսկ կառավարման պահեստային կետերի տեղակայման վայրերը /հասցեները/ համաձայնեցվում են ՀՀ ՊՆ հետ:

ՀՀ վարչապետի, ՀՀ մարզպետարանների համար կառավարման փոխարինող պահեստային կետեր են հանդիսանում ՀՀ Սյունիքի մարզպետարանի համար՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառավարման պահեստային կետը և հակառակը:

ՀՀ Սյունիքի մարզի կառավարման պահեստային կետի գործունեությունն ապահովելու համար Սյունիքի մարզպետի որոշմամբ ստեղծվում է հերթափոխ, որն ընդգրկում է հետևյալը՝

1/ տեղեկությունների հավաքման, վերլուծության և որոշումների կայացմանն ուղղված առաջարկությունների մշակման խումբ, որի գործառույթներն են՝

ա/ իրավիճակի մասին տվյալների հավաքագրում, ընդհանրացում և վերլուծում.

բ/ ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից համապատասխան որոշում ընդունելու համար առաջարկությունների նախապատրաստում.

գ/ ընդունված որոշումների հիման վրա հրամանների և կարգադրությունների նախագծերի մշակում.

2/ պետական կառավարման մարմինների հետ իրականացվող աշխատանքների համակարգման խումբ, որի գործառույթներն են՝

ա/ ոլորտին վերաբերող իրավիճակի մասին տվյալների հավաքագրում, ընդհանրացում, վերլուծում և փոխանցում առաջարկությունների նախապատրաստման խմբին.

բ/ ոլորտին վերաբերող առաջարկությունների ներկայացում առաջարկությունների նախապատրատման խմբին.

գ/ ընդունված որոշումների ոլորտին վերաբերող կետերի մասին իրազեկում կատարողներին.

3/ կապի ազդարարման ապահովման խումբ, որի գործառույթներն են՝

ա/ ՀՀ Սյունիքի ՔՊ պետի և ՔՊ շտաբի պետի միջև կապի ապահովում.

բ/ բոլոր տեսակի տեղեկատվության ընդունում, հաշվառում, նաղնական վերլուծություն, ամփոփում և փոխանցում առաջարկությունների նախապատրաստման խմբին.

գ/ ընդունված որոշումների, հրամանների և կարգադրությունների մասին իրազեկում կատարողներին.

4/ նյութատեխնիկական ապահովման խումբ, որի գործառույթներն են՝

ա/ կառավարման պահեստային կետի աշխատանքի նյութատեխնիկական ապահովում.

բ/ կառավարման պահեստային կետի անձնակազմի կենսաապահովում.

գ/ կառավարման պահեստային կետի ապահովում:

ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ համապատասխան համայնքների ու կազմակերպությունների կառավարման պահեստային կետերում աշխատող անձնակազմի թիվը սահմանվում է համապատասխան ՔՊ պետի կողմից:

ՀՀ Սյունիքի մարզի կառավարման պահեստային կետում պետք է նախատեսվի մարզում տեղակայված ՀՀ ՊՆ զինվորական կայազորի օպերատիվ խմբերի աշխատատեղեր՝ 5-10 մարդու համար/ թիվը որոշում է կայազորի պետը/:

Կառավարման պահեստային կետին ուղղված պահանջներն են՝

ա/ յուրաքանչյուր աշխատողի համար ապահովի 2,5-3,0 մ² մակերեսով տարածք.

բ/ ապահովված լինի 3 մուտքով/ ելքով/.

գ/ ապահովված լինի օդափոխության և ջեռուցման համակարգով.

դ/ միացված լինի ընդհանուր էներգամատակարարմանը, ջրի և կոյուղու ցանցերին

ե/ ապահովված լինի ռադիոկապի և հեռահաղորդակցության միջոցներով.

զ/ ունենա տարածքի ներքին ավտոմատ հեռախոսակայան.

է/ ղեկավար կազմը և յուրաքանչյուր խումբ ապահովված լինեն համակարգչային տեխնիկայով, սարքավորումներով և տվյալների էլեկտրոնային փոխանակման ներքին և արտաքին ցանցով.

ը/ ունենա ջրի պաշարէ 3 օրվա ընթացքում անձնակազմի յուրաքանչյուր անդամին օրական 10լ. խմելու ջրով ապահովելու հաշվարկով.

թ/ ապահովված լինի ՔՊ ոլորտին և զորահավաքին վերաբերող համապատասխան փաստաթղթերով.

ժ/ ապահովված լինի համապատասխան կահույքով և գրենական պիտույքներով.

ի/ ինքնուրույն էներգասնուցման սարքերով և հակահրդեհային միջոցներով:

Կառավարման պահեստային կետերի նախապատրաստումը

Կառավարման պահեստային կետերի տարածքը և շինարարական կոնստրուկցիաները պահվում են սարքին և վերանորոգված վիճակում, իսկ տեխնիկական սարքավորումները և միջոցները՝ աշխատանքային պատրաստ վիճակում:

Կառավարման պահեստային կետերի գործունեության պատրաստականության համար ընդհանուր պատասխանատվություն է կրում ՀՀ վարչապետի՝ ՔՊ ոլորտում լիազոր մարմնի ղեկավարը, իսկ ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ համապատասխան համայնքների ու կազմակերպությունների համար՝ համապատասխան ղեկավարը:

ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ համապատասխան համայնքների ու կազմակերպությունների կառավարման պահեստային կետերը խաղաղ ժամանակ կարող են օգտագործվել տնտեսության կարիքների և բնակչության սպասարկման համար, ինչը չպետք է որևէ կերպ խոչընդոտի սահմանված ժամկետներում դրանց պատրաստականության բերմանն ու նպատակային օգտագործմանը:

ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ համապատասխան համայնքների ու կազմակերպությունների կառավարման պահեստային և շարժական կետերի ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ ծախսերը կատարում են ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տվյալ տարվա ՀՀ բյուջեով նախատեսված միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին: